1864.
16 Յուլիսի
բուս հին տոմարի։

Թիւ 20.
ԱԹԱՌԻՆ ՏԱՐԻ
ԺԲ Յ
տե[illegible]

1864.
28 Յուլիսի
բուս նոր տոմ.

Registered at the [illegible] Post-Office for transmission abro[illegible]

ԷՐԿԱՐԱԳՈՒՆՔ

ԼՐԱԳԻՐ ՄԱՆՉԵՍՏԵՐԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏՆԱԿԱՆ, ԿՐՕՆԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ։

Հրապարակագրական, տպագրական եւ բանասիրական էրուրեան էրուրինեան է Մանչէսթրէ։

—Նամակ։ յղուած է պահանջէ (ազատ է դուռոյ գրուելոյ) ուղղէն յանուն Առաքէ Կարապէտ Վ. Շահնազարէանց, էրէլտ այրէ։

M. le Chevalier K. Vardapete Shahnazariantz, 151, Rumford Street, Manchester, (Angleterre.)

Տարեկան գինն հանդերձ դրամոյ գրուելոյ, ուր երթան Անգլիոյ եւ Ցիրանայի ընդերամէջ է, ի 25 ֆ. ֆ.
—Այլ տեղերէն ազատ գրուելոյ դրամն առնուզ վերայ է։
—Վիեննայէն . . . . . 13 „
—Եւրոպայէն . . . . . 7 „
—Մէկ թերթի գինն է Մանչէսթրէ է 5
այլուր՝ 7
—Բաժանորդ լեզուին ամէն տարոյ հելին եւ գարնանային։

Ստորագրութեան տեղիքն են Կոստանդնուպոլիս Սարգիս Աղայ Մ. Հիսարլեանի սենեակն ի Գալաթիա. — Իզմիր Մարկոսեան Յակոբ Աղայի սենեակն. — Հալէպ Յովհաննէս Աղայ Բիւրքճեանովի սենեակն. — Սուրբ Երուսաղէմ Այժանապատիւ Եպիսկոպոսի Վարդապետի սենեակն. — Աղեքսանդրիա (Եգիպտոս) Տէր Գասպարեան Գալաղրոս Աղայի սենեակն. — Կալկաթա Պ. Պետրոս Սարդսեանցի սենեակն. — Բաթավիա Պ. Մանուկ Որդանանեանի սենեակն. — Լոնդոն Աղայ Մաքսուտովֆի սենեակն. — Փարիզ Աղայ Պօղոս Արփաճեանի սենեակն. — Մարսիլիա Աղայ Մարգար Պապիկեանցի և Աղայ Յարութիւն Անդրէասեանի սենեակներն։ Այս այժմ ուզողներն կրնան վերոյգրեալ սենեկաց մէկէն ստանալ մինչև որ յատուկ գործակալներ հաստատեմք բազմահայ և ընթերցասէր քաղաքներ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ։

Տէրութիւն Բաղդատայանութիւն.—Ցիրանայ.—Ամերիկա.—Կէօնայան — Կոնկլաւ յամ ժողով ընդարձակեան Պապի.— Ապուռաշ այսպէս է խմբեր. — Այլ է Այլ. — Նոր Գիտութիւն.—Ինդնօրէն Ծննդեանութիւն.—Նոր Հրացանդեր.—Աղէտալի մեկ անդ.—Սպանչեալ 2 Մարդայանդեր.— Փարիզի Վիճակագրութիւնն. — Եւրոպական Բիրմբ ղրժամաշ Եղեկեան. — Կողաբա Բիանաբարութիւն. — Հրաղէնդեր էրէ-էն լեցնել — Նոր էր. —Ահեղ Գիտութիւն. — Ծաղիկ հոգն մանաբեր է.—Մեկ Փարիզայի գրագրութիւն.—Հայկական Տաք Կ. Վ. Շ.—Ծանուցումներ.— Եբնե-էլ+Աղբայնոց. —Վերջին Լուրեր —Աւրուան։

ՏԵՍՈՒԹԻՒՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ

—Բոմբայիէն եկած մեկ հեռագիր կծանուցանէ թէ Կարուլի Ամիրն ասկալի մեկ ճակատ տուաւ Աֆղանի խանին և չարաչար յաղթեցաւ։

— Զինաստանէն հասած լուրերն Շանգ-Շօֆիի առնուիլն կհաստատեն, որուն տիրելին գնդապետ Գորդոն և կայսերականներն։ Ցանդիանգ-ալ, բանի մի օր յետոյ, անձնատուր եղաւ. ապստամբներու ձեռքն մնաց միայն Նանկին։ Գորդոն գնդապետն կայսերական կողմն լրանելու միտք ունի։

— Լոնդոնի երկկուան Գազետն ծովակալութեան մեկ հրամանն կհրատարակէ. որով նաւապետերու թիւն 350էն 300ի, Ֆրեգատի նաւապետերու թիւն 450էն 400ի, և տեղապահերու թիւն 1,200էն 1,000ի կիջեցունէ։

— Լոնդոնի Դանմարգի դեսպանատան մէջ կկարծեն թէ Ռիզսրաադն պիտի լուծուի, որոյ անդամներն տենդական յուզման և կռուի բաղաքական ոգեւորութեան տակ ընտրուեցան, զոր չկամիր այլևս արքայն։ Կվախցուի թէ Կոփենհագի խուլ յուզումն վայրկեանէ վայրկեան յեղափոխութիւն հանէ։

—Իտալիոյ Ծերակոյտն վիճաբանութիւնն լմընցուց մտից և ծախուց պատկերի վերայ։ Պ. Մարլիանի Սպանիոյ հետ ունեցած յարաբերութեանց վերայ ակնարկութիւն ընելով խնդրեց որ Մադրիդ եղած Իտալական գործակալութիւնն ջնջուի։ Սրտաբին Գործոց Պաշտօնեայն պատասխանեց ըսելով թէ. Իտալիա մեծ տէրութիւններէ ընդունուած ըլլալով, Սպանիայէն ընդունուելու հետամուտ չէ եղեր։ Պ. Մարլիանի հրաւիրեց այն ատեն տէրութիւնն որ Սպանիացւոյ Բուլոյն եղած ուսումնարանին տիրէ, որուն Խորհրդարանի նախագահն պատասխանեց ըսելով թէ. Ծերակոյտն կրնայ ապահով ըլլալ որ տէրութիւնն իր իրաւունքն պիտի վարէ։

Մադրիդի Լիպոկա (լրագիր) կծանուցանէ թէ ամենայն ճին տէրութեան ըրած զգուշութիւններն անօգուտ չեղան։ Դաւաղիրերն հեռագրին տիրէին պիտի և դաւաճաններուն ըուր տային թէ Մադրիդ ապստամբեր է և այն համարի ընելիք աղէկցութեանն սպասէին։

— Լորդերու Խորհրդարանն իր բոլոր նիստն զբաղեց գրեթէ մեկ կրօնական վիճաբանութեան, զոր գրգռեց լորդ Հուտոն Կանտերբուրի նահանգի Եկեղեցականաց բանի մի մատեաններ դատապարտելու աղագաւ։ Օքսֆորդի Եպիսկոպոսի պահանջմանցն չնայելով լորդ-Շանսլիանն պատասխանեց թէ, տէրութիւնն այսպիսի պարագայի մէջ երեք կերպիւ կրնայ վարուիլ, 1. ամենևին ուշադրութիւն չընել եկեղեցական ատենի ըրած տնօրէնութեանցն. 2. յիշեալ ատեանն լուծել. 3. անոր դէմ ամբաստանել. եւ յաւելցուց թէ. առաջին կերպն է, զոր տէրութիւնն այժմ ընդունիրէ։

Իսկ Հասարակաց Խորհրդարանին մէջ լորդ Պալմերստոն անպատրուակ յայտնեց թէ տէրութիւնն միտք չունի ամենևին յետս կոչել Բրազիլի դերեվաճառութեան համար լորդ Աբերդինի ըրած պայմանն։ Այն ատեն Պ. Օսբորն ծանոյց թէ կխորհի հարցունել տէրութենէն անոր Բրազիլի հետ ունեցած յարաբերութեանց մասին։

—Կոմմիսիոնն, որուն յանձնուած էր հարաւային Իտալիոյ երկաթուղեաց քննութիւնն, երէկ պատգամաւորաց Խորհրդարանին առջև կարդաց

իր յայտարարութիւնն, որ ամեն տեսակ կաշառակերութեան կասկածէ ազատ կկացուցանէ տէրութեան գործակալ պատգամաւորներն, եւ կընդունի թէ պատգամաւոր Սուսաննին երկաթուղիի ընկերութեան հետ հաղորդութիւն ունէր առաջարկութեան վերայ բուէ ձգելէն յառաջ, ուստի և երկաթուղին նոյն ընկերութեան տալէն յառաջ. և կեզրակայնել առաջարկելով Խորհրդարանին յայտնել թէ պատգամաւորութեան պաշտօնն և տէրութենէ երաշխաւորեալ Ընկերութեան վարչութեան տիտղոսն մի և նոյն անձին չեն կրնար տրուիլ։

—Շլեզվիգի բոլոր գործակալներն մէկ աղերսագիր ձեռագրեցին խնդրելով որ Դանմարգէն միանգամայն զատուին։ Բազմաթիւ գործակալներ, որք չյօժարեցան ձեռագրել այն թուղթն, Շլեզվիգէն արտաքսուեցան։

—Լոնդոն լուր տարածուեցաւ թէ Դանմարգի նոր արքունիքն կիսորհի արքային առաջարկել որ սահմանադրութեան մէջ ինչ ինչ փոփոխութիւն ընէ։ Անոր նախագահն չէզոք տէրութեանց ծանուցագիրեր խրկեց յայտնելով թէ Դանմարգ պատրաստ է ամեն զիջումն ընելու միայն թէ Դանմարգի տէրութեան ամբողջութիւնն պահուի։

—Շուէդի թերթերն չարաչար կպախարակեն Դանմարգի նոր պաշտօնեաներն Մօլտրկ կոմսի հակականգինավեան կարծեաց համար։

—Տուրինի պատգամաւորաց խորհրդարանն երկկ վերջին անգամ դումարուեցաւ։ Սաստիկ վիճաբանութենէ յետոյ Խորհրդարանն ընդունեց Գ. Գ. Մարիի և Բիանչերի զեկուցումն, որք կիանդրէին պաշտօնէիցմէ մէկ օրէնք առաջարկել որգելով որ պատգամաւորաց անձնական և երկրի շահուց մէջ ներհակութիւն չելլէ։

—Բելգիայի Մօնիտէօրն արքայական հրովարտակ մի հրատարակեց, որով պատգամաւորաց Խորհրդարանն կլուծանէ, նորոց ընտրութիւնն Օգոստոսի 11ին որոշելով և նոր Խորհրդարանի բացումն նոյն ամսոյ 23ին։

—Իշխան Կուզա անցեալ ուրբաթ մէկ յայտարարութիւն հանեց իր Կոստանտնուպօլիս ըրած ճանապարհորդութեան արդիւնքն իմացունելով ժողովրդեան և շնորհակալութիւն մատուցանելով պաշտպան և երաշխաւոր տէրութեանցն։ Իշխանն կծանուցանէ յայտնապէս նաև թէ տէրութիւններն, բաց ի սակաւ թեթև փոփոխութեանց, ընդունեցին Մայիսի 2ի արարքն, հաստատակայ բուէով հաստատուած։ Ռումէնի Մօնիտէօրն հրատարակեց երէկ սահմանադրութեան զլիաւոր փոփոխութիւններն, որք որոշուեցան իշխանի և Դրան մէջ։ Ծերակուտի անդամ ըլլալու համար որոշուեցաւ որ անոնք իշխանէն հաստատուին ուղղակի և 800 դիւկատ տարեկան եկամուտ ունենան։ Պատգամաւորաց խորհրդարանին անդամ ընտրուելու համար հարկ է 200 դիւկատ եկամուտ ունենալ։ Այս վերջին տնօրէնութիւնս պիտի է առաջնորդել խորհրդարանին անոր առջի դուռնանն։

—Պատերազմող տէրութեանց մէջ ըլլալիք հաշտութեանց վերայ տակաւին իսկական բան մի չիմացուեցաւ. այլ Լոնդոնի իրազէտ քաղաքական շրջաններն կկարծեն թէ անձնական միջոցութիւնն դիտիին մէկ զի դրուեցաւ, և թէ Դանմարգի իր բոլոր երկրամէն Գերմանական Դաշնակցութեան մէջ մնալու դաղափարն երբէր մեծ բանի տեղ չդրուեցաւ։ Կկարծուի թէ պատերազմն լմննայ պիտի Շլեզվիգ Հոլշտէյն Գերմանիային տալով, և թէ Դանմարգի արքայի հաշտասիրութեան համար Վիեննա խրկելիք երկու պաշտօնական պատգամաւորներն են Պ. Պ. Քաղ և կոմս Մօլտրկ։ Կհաւատան թէ խաղաղութիւնն հաստատուելուն պէս Պրուսիա եւ Աւստրիա պահանջեն պիտի որ Դաշնակցութիւնն պարպէ Հոլշտէյն պատճառաբերելով թէ Դանմարգ 2 դրսութիւններն իրենց կտայ և ոչ թէ Դաշնակցութեան Դիետին։

—Կհաւատան թէ Գերմանական Դիետն ամենայն զօրութեամբ մարտի պիտի Պրուսիոյ եւ Աւստրիոյ պահանջանայ դէմ եթէ այն երկու պետութիւններն ուզեն որ Դաշնակցութեան զօրքն Հոլշտէյն պարպի։

—Բիլլեայի թագաւորն ամսոյս 20ին մեկնեցաւ դէպ ի Վիշի հանքային ջուրերն, ուր 14 օր միայն մնալու է։

—Բարեյուսոյ Հրուանդանի լուրերն Բաֆրերու հետ նորէն պատերազմելու երկիւղ կյայտնեն։ Կրելի անուն, երկրայի իշխողներէն ամենազօրեղն, բազմաթիւ զօրքով Բաչի անցաւ և ձիաւոր ոստիկաններն ցրուելով գաղթականութեան երկիրն մտաւ, որու դէմ գունդեր խրկուեցան անոր յառաջադիմութիւնն խափանելու համար։ Այլ կյաւելուն թէ Բաֆրերու զլխաւորի գնացքն պարզ սպառնալիք միայն է, որ իր բնակչաց մէկ մասն գաղթականութեան երկիրն չթողու փոխադրել. և թէ տակաւին իրական մէկ ճակատ տեղի չունեցաւ։

—Պրուսիոյ արքայն Կառլսրուղէն Գաստէյն գնաց։ Կըսեն թէ, նա կցանկայ որ Պրուսիոյ Դիետն երկարաձգի իր դարձէն զկնի ի Բերլին, և իր բացակայութեան ատեն Պրուսիոյ նաւատորմի զօրանալն կարգի դնէ։ Պրուսիոյ տէրութիւնն արդէն 6 զրահաւոր նաւ դնեց. և աւելի գնելու ալ միտք ունի։ Պ. Բիսմարկ կիսորհի, ընդ հակառակն թէ պէտք չէ արդի Խորհրդարանն լուծանել եւ արդի անդամոց հայրենասիրութիւնն պատերազմի ծնած ծախքն կարէ հոգալ։

—Հաւատարիմ աղբիւրէ կիմանամք թէ Աւստրիա և Պրուսիա միաբանութեամբ որոշերեն որ Գերմանական Դիետն չընդունի անմիջապէս Օգոստենբուրգի դուքսն։ Հաւաստի եմք որ Պրուսիա այս խնդիրս այնչափ յամեցունէ պիտի, որչափ կարելի է. և կկարծեմք թէ Պ. Բիսմարկ կիսոկայ Պրուսիային սահմանադրական ազատութիւններ տալ որպէսզի դքսութեանց մէջ այնպիսի մէկ կուսակցութիւն պատրաստէ, որ անոր հետ միանալն խնդրէ։

—Տունիսէն Տուրին հասած լուրերն կպնդեն թէ ապստամբութիւնն ամեն տեղ բոլորովին դադրեցաւ։

ՖՐԱՆՍԱ

Պ. Պ. Ռուլանդ, Ֆուլդ և Շասլուբ-Լօրատ պաշտօնէից փոփոխութեան շշունչներն կյարատևեն։ Պ. Դիւրույի փոխանորդն դեռ չդտնուեցաւ. այլ կըսեն թէ անոր յաջորդէ պիտի Պ. Սօլի, Ճեմարանի կաճառորդն, այն պատրուակաւ, թէ նա Ֆոնտենբլօ կայսեր հետ հաստատակայ կրթութեան վերայ երկար խօսակցութիւն ըրաւ։

Այս ժամուս մէջ մէկ հրաժարումն միայն ընդունելի կերևի, որ է Պ. Ֆուլդին, որու համար կըսուի թէ չատ յոգներ է։

Ֆրանսայի պետութիւնն Անգլիոյ մօտենալու, օր աւուր, աւելի նշաններ կցցնէ։ Փէյիի հրատարակած վերջին յօդուածն այս առարկայիս վերայ, յայտնի ապացոյց է։ Այլ երևակայութիւններն աւելի ևս արագ կքալեն լուր տարածելով թէ Նապոլէոն Գ. այսմ մասին Վիկտորիա թագուհիին ինքնաձեռագիր մէկ նամակ գրերէ. սակայն բաներն այս աստիճանիս չեն հասեր դեռ։

—Կոլոնի Գազէթն կգրէ թէ անհիմն է լոլորովին Նապոլէոն Գ. Օլդենբուրգի մեծ դուքսի ընտրելակցութեան և Դանմարգի Գերմանիոյ Դաշնակցութեան մէջ մտնելու անհաւան ըլլալն։

—Պաշտօնական մէկ նամակ Փարիս գալով կծանուցանէ թէ մարտու Աբդ-էլ-Ադիլ, սալըտամ Ցլիտտաններու զլխաւորն, էլ-Աղերիի սպանմանէն յետոյ, անձնատուր եղաւ։

—Իշխանուհի Կլոդիլտ, իշխան Նապոլէոնի կողակիցն, մէկ որդի ծնաւ դեղեցիկ և առողջ։

Ա. ՄԵՐԻԿԱ.

Դայլի Տէլեգրաֆի Պ. Շազի, Լինկոլնի արքունեաց դանձուց պաշտօնէի, փոփոխութեան մասին կակնարկէ ըսելով թէ. «Ամերիկայի ընտանի պատերազմի առաջին եղանակն լըմնցաւ։ Այս արիւնահեղ կռիւս տևեց մինչև ցայսօր Պ. Լինկոլնի վերայ ունեցած վստահութեամբն միայն, և Գերմանացւոց և Իռլանդացւոց օժանդակութեամբն, զորս խակսլէս թնդանոթի կերակուր ըրին։ Պէտք չէ մոռնալ դարձեալ, այն տարօրինակ դանձական տաղանտն, անդրատլանդեան գաղութարներուն յարմարցուցած, որ էր պատերազմի կենսական և կարևոր տարրն, որ կչբանայ այժմ։ Սակայն տեսակ մի սնանկութիւն է անոնց համար, որք Հարաւի անկախութեան դէմ պատերազմի հեղինակ եղան։ Պ. Շազի հայրենակիցներն տեղեկացան, շատ ժամանակ չէ, թէ նա պարտաւորեցաւ դտնել 20 միլիոն ստերլին ոսկի դրամ, մի միայն տարեկան շահն վճարելու համար, և անոր ըրած փոփոխութիւններն, իւրաքանչիւր օր, կկս միլիոն կտրելնան։ Ուստի մէկ թուաբան հաստատեց ապրած խորհրդարանին առջև թէ Ամերիկայիք, բիչ օրէն, վճարեն պիտի աւելի բազմաթիւ միլիոն ստերլիններ քան թէ Անգլիացիք՝ իրենց դիղուած հին պարտուց համար.»

«Այլ պատերազմ զրգռեցին. կյաւելու Դայլի Տէլեգրաֆ։ Նախագահն և իր զօրապետներն խրեցին Հասարակապետութիւնն այս կռուս ամեն աղետաբեր հետևանաց մէջ. բայց Պ. Շազն միայն ճար դտաւ և դանձական տնօրէնութիւններ ըրաւ ամենաբիրտ կերպիւ դաւառներն, միջոցներն և հասարակաց վստահութիւնն չարաչար վարելով։ Նա է, որ 3 կամ 4 տարուան մէջ,

կառակութիւններէ զատ այլ բան չկար, և արդիւնք չէր տեսնուեր բնաւ։ Վերջապէս, անպտուղ կռիւներով երկու տարիէն աւելի անցունելէն յետոյ, Սուրբ Բոնավենդուրայ Սուրբ Ֆրանսուայի կարգի կրսեր եղբարց Կրօնապետն, յորդորեց Վիտերբի բնակիչներն որ կարդինալներն փակեն եպիսկոպոսական պալատին մէջ, ուր անոնք կըժողվէին։ Խրատն ընդունելի եղաւ. և սուրբ ընտրողներն բանալիի տակ դրուեցան. և կոնկլավի պահպանութիւնն յանձնուեցաւ Ռանիերօ Գատտիին, որ քաղաքի գլխաւորն էր։»

«Սակայն օրեր և ամիսներ կանցէին տակաւին, և եկեղեցին իր տեսանելի գլուխէն միշտ զուրկ կըմնար։ Պահանջներութիւն աւելի շատցաւ և սաստկացաւ. ոչ ինչ կարող էր ծիրանաւոր ընտրողներու կամակորութիւնն ընկճել։ Այն ատեն ժողովուրդն, անհամբերութենէ բռնադատեալ, հերոսական մէկ միջոց գործ դրաւ։ Եպիսկոպոսարանի տանիքն փլուցին որպէսզի կարդինալներն աւերօղի ենթակայ ըլլալով՝ ստիպուին հաւատացելոց իղձն շուտով կատարել։ Այս ազդու միջոցս առջիններէն լաւագոյն յաջողութիւն չունեցաւ կամապաշտ ընտրողներն միաբանելու համար։ Բայց սոնք, իրենց անհանգիստ բնակէն ազատելու համար մէկ հնարք հայթայթեցին։ Կարդինալներէն, զորս մահն տասներկուքի իջեցուցերէր, իրենց իրաւունքն իրենցմէ վեցին տուին. անոնք ալ Պապ անուանեցին Թէոբալդ Վիսկոնտի դը Պլէզանս, որ Լիեժի աւագսարկաւագն էր և առաքելական փոխանորդ Սալանիոյ Սորա քաղաքի։»

«Կարդինալ չէր այս անգամի ընտրածն, որ Սուրբ Պետրոսի աթոռն ելաւ։ Գուցէ ասիկա ամեն հետամուտներն մխիթարելու մէկ միջոց էր. Ընտրութիւնն 1271. Սեպտեմբերի 1ին լմնցաւ։ Կղէմէնտ Դ. 1268. 28 Նոյեմբերի մեռեր էր. այսպէս Սուրբ աթոռն երեք տարուան չափ պարապ մնացեր էր։ Վերջապէս, նոր Պապն, որոյ չուն հաղորդակցութեանց դժուարութիւնն խափաներէր, 1272. 2 Փետրվարի Վիտերբ գնաց և ապա Հռոմ թագ առաւ Գրիգոր Ժ. անուամբ։»

«Այս երկայն պարապորդութեանս ատեն հոգևոր և աշխարհական թագաւորութիւններն (Պապի) անգլուխ վարուեցան։ Եկեղեցւոյ բարեկարգութիւնն ինչպէս պահուեցաւ։ Չարիքն ինչպէս ժողվեցան։ Գուցէ այս իրողութիւններս, աւելի չվատթարացան։ Ինչ և իցէ, երբ որ թէ, Գրիգոր Ժ. քանի մի անվայելչութիւններ տեսաւ, և անոնց վերադարձն խափանելու դիտմամբ ընդհանրական ժողով (ըստ Պապականաց) գումարեց Լիոն 1272 թուին, որ Պապերու ընտրութեան համար կանոններ կարգեց։»

ԼԷՈՆԻ ԺՈՂՈՎՈՅ ԿԱՆՈՆՆԵՐՆ ՊԱՊԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ։

Մեր ժամանակի ժողովներու մէջ, անցածներն պատմելէն յառաջ, պատմեմք պիտի թէ անոնք ինչպէս պէտք էր որ անցնէին, և գիտնելու համար թէ որչափ դրուած կանոնէն խոտորուեր են, մեր առեան կըբերեմք Լիոնի ժողովի հաստատեալ կանոնի բնագիրն։ (1)

Պիտի շարունակուի

(1) Լատին բնագրին մէջ մեր առնան բերած յօդուածոց ամեն մէկին մի մի զատ օրէնքներ։ Այս տարբեր օրէնքս մէկ տեղ բերելով մեք մի օրէնք ըրինք և այլ և այլ յօդուածներու բաժնեցինք։

ԱՍՏՈՒԱԾ ԱՅՍՊԷՍ ԿԱՄԵՑԵՐ

Տղայութենէս ի վեր, նախ իմ ծնողքէս, ապա շատ ազգայիններէ մեր ազգի արդի վիճակի վրայ շատ անգամ լսերեմք թէ «Աստուած այսպէս կամեցերէ։» Եթէ մարդիկ կան, որք իրենց ամեն խօսքն կշռելով, չափելով, մտածելով կարտասանեն, մարդիկ ալ կան, որ լոկ նմանութեամբ, այլոց օրինակին հետևելով, առանց կշռելու և կապկօրէն կարտասանեն։ Վերոյիշեալ առածն ալ, ճիշդ այսպիսի ծնունդ ունենալուէ եթէ հեթանոսութեան մնացորդ չէ։ Գիտեմք որ Մահմետականներն եւ Հեթանոսներն ի հնուստ ճակատագիր կընդունին և կհաւատան թէ Աստուած ինչ որ ի յաւիտենից ամեն մարդու և իրաց համար տնօրիներէ՝ այնպէս ալ ըլլալու է, թէև մարդիկ՝ սուրբ և իրերն նուիրական, աստուածահաճոյ եւ մարդասիրական ըլլան։ Այսպիսի անմիտ կարծեաց հետևելով՝ մարդիկ, որքան եւ արդար և օրինապահ ըլլան, և անոնց գործերն՝ որչափ ընդունելի եւ կենսաղօգուտ ըլլան «Աստուած այսպէս կամեցերէ» ըսելով, պիտի պատժուին, պիտի կորսուին եւ ոչնչանան։ Եթէ «Աստուած այսպէս կամեցերէ» ըսելն կրօնքէն վաւերականութիւն եւ առողջ բանականութենէն ընդունելութիւն գտնէ՝ այնուհետեւ բնութեան Հեղինակն պիտի համարուէր անիրաւ եւ անարդար դատաւոր, և մարդն՝ բանաւորութենէ՝ զուրկ և ստրուկ, և ժամանակաւոր եւ անժամանակ բարիքն եւ չարիքն՝ խաղալիք հաճոյից, անիրաւութեան եւ բախտի. քանզի այս է եւ այսպէս ըլլալու է հեթանոսական եւ մահմետական տրամաբանութեանց անմիջական եւ ուղղակի եզրակացութիւնն։

Բարեբախտաբար, Աւետարանն Քրիստոսի առաքելութեամբ երկրի վերայ յայտնեցաւ եւ հեթանոսական խաւարային անդունդին և մարդկային իմաստասիրութեան քայքայեալ եւ հիմնայատակ եղած շէնքի փլատակներուն մէջ իր ամենապայծառ ջահն վառեց։ Մարդիկ, որք Աւետարանի ձայնին լսեցին եւ Քրիստոսի Որդի Աստուծոյ եւ Փրկիչ ըլլալն ընդունեցին, հաւատացին որ «Աստուած այսպէս է կամեցեր» ըսելն եւ ընդունիլն հեթանոսութեան ճակատագրի եւ ողբալի մոլորութեան վիժած է. անոնք սերտ համոզուեցան որ մեր գոյութեան Հեղինակն ոչ մեզմէ ումանք աստ եւ ի հանդերձեալն մշտնջենաւոր թշուառութեան համար սահմանէրէ, ոչ ալ ումանք աստ եւ ի հանդերձեալն շարունակ երանականութեան. թէ մեր Գերագոյն եւ ամենաբարի Արարիչն ոչ միայն մարդկային ազգն, այլ նաև ամեն շնչաւոր եւ անշունչ, ամեն երկնաւոր եւ երկրաւոր արարածներ իր առատ եւ աննախանձարար բաշխած բարութեանցն հաղորդ ըլլալու հրաւիրուածէ, թէ Աստուած երբէք մեղաւորի մահն եւ կորուստն չկամիր. այլ անոր դարձն եւ ապրիլն. թէ Աստուած, իբրեւ Հայր, այնչափ երկայնամիտ, ներող և արդար է, որ բնաւ մէկ արդար բիւր հազար մեղաւորի համար չկորսնցուներ և ոչ յանուն Քրիստոսի Քրիստոսի թշնամիին մեր տուած բաժակ մի ցուրտ ջուրի վարձքն անգամ չզլանար. ուստի և ոչ մարդոց մեծամեծ առաքինութեանց հատուցումն. թէ աստուածային նախախնամական տնօրէնութեանց մէջ ամենայն ինչ յերկինս և յերկրի անփոփոխ է, ինչպէս բնութիւն անփոփոխ է, ինչպէս արևու, լուսնի, ծովու, ցամաքի, եղանակաց եւ այլ երկնային եւ երկրաւոր մարմնոց ընթացքն, շրջանն, յաջորդութիւնն եւ տևականութիւնն. թէ Աստուած, սխալական մարդոց եւ չկանխագէտ իշխանաց եւ դատաւորաց պէս, իր օրէնքն եւ հաճութիւնն, որ ըստ օրէ չփոփոխեր, հետ զհետէ չկատարելագործեր եւ վերջապէս, թէ Աստուած բարին եւ չարն, առաքինութիւնն եւ մոլութիւնն, օրինապահութեան եւ օրինազանցութեան հետևանքն բնական եւ յայտնական ճամբաներով մարդոց ազդելէն յետոյ զանոնք ազատ թողերէ, որ իրենց ժամանակեայ եւ մշտնջենաւոր բարեկեցութիւնն իրենք տնօրինեն եւ հոգան։ Ուստի Քրիստոնէից, թշուառութեանց մէջ տապալուած ատեն, որ միշտ անոնց կամ անոնց նախնեաց, իշխանաց եւ առաջնորդաց սեպհական մոլութեանց պտուղն ըլլալով «Աստուած այսպէս է կամեցեր» ըսելն ոչ միայն հեթանոսական կարծեացմէ դեռ չազատուած ըլլալն մատով կցցնէ, այլ եւ ամենաբարի եւ ամենարդար Նախախնամութեան դէմ ծանր թշնամանք կընեն, մանաւանդ եթէ ըսողն գիտնական եւ եկեղեցական մին է։

Եթէ պէտք ըլլար մեր վարդապետութիւնն Նոր Կտակարանի վկայութիւններով հաստատել, մեք պատրաստ եմք, անոր իւրաքանչիւր տողին եւ բառին մի մի ապացոյց բերել, զոր այժմ աւելորդ համարելով զանց կընեմք։ Այն ամեն անձինք, որք մեր անկեղծ եւ ազատախօս բնութիւնն գիտեն, հաւատացի եմք, որ մեր գրածներուն հաւատ ընծայելու համար Նոր Կտակարանի թուանշաններուն պէտք չունենան բայց ի Յեղուխտայ վարձկան եւ արբանեակ Ջամուճեանէն, որ ի բնէ վայրահաչելու առաքելութիւնն ընտրերէ եւ երբէք Հայոց եկեղեցին սուրբ եւ ուղղափառ է չըսելով եւ ոչ ալ անոր դաւանութեանն եւ հանգանակին հաւատալով, ինքն զինքն Լուսաւորչեանի դիմակով կեղծելով, մէկ ոտն Բէրէկի Լազարիստաներու դպրոցէն, միւս ոտն Ղալաթիոյ Յեղուխտայ վանքէն չկտրելով՝ դիւերային խաւարի մէջ Լուսաւորչի եկեղեցւոյ հիմունքն կփորէ և յորեկն նոյն եկեղեցւոյ անդամ կձևանայ։

Ջրհեղեղէն առաջ մարդոց մէկ ազգ, կամ այլ եւ այլ ցեղերու բաժնուած ըլլալն կամ չըլլալն հաւաստեաւ չգիտեմք, այլ աշտարակի ատեն Նոյի սերնդոց մէկ լեզու միայն ունենալն քաջ գիտեմք, թէեւ Նոյ իր երից որդւոց մէջ, անկէ առաջ, արդէն երկիրն բաժներէր. եւ Յաբեթեան, Սեմեան եւ Քամեան տոհմերն արդէն, ըստ բաւականին, իրարմէ հեռացեր եւ խորթացեր էին, որոյմէ սևերես Ներրովդն ճերմակ Յաբեթեաններն այնպէս կնեղէր, որպէս այժմեան Հիւսիսային Ամերիկայի ճերմակ Յաբեթեաններն սևամորթ Ներրովդեաններն կնեղեն։

Մարդկային ընդհանուր սեռն թէեւ մէկ հօրէ եւ մէկ մօրէ յառաջ գալով, բնական ազդումն կթելադրէր որ անոր ամեն անդամներն աւելի մարդոյ անունով ծնէին, ապրէին եւ մեռնէին քանթէ տոհմի եւ ազգի անունով. սակայն աւելի բարձրագոյն մէկ գաղափար, աւելի ճշմարիտ եւ մարդկային բնութեան վայելուչ մէկ ազդեցութիւն անոնց զգայմանց եւ հոգւոց խորշերուն մէջ տպաւորեց թէ մարդիկ ազգի կամ մէկ ամփոփ թուով ընկերացեալ եւ մէկ կրօնքով, մէկ լեզուով

տինի Նորականոյց եկեղեցւոյ մեծ երգեհոնն շինել հրաման առին անոր վրայ, առջի անգամ, ի գործ դնել այս նոր դրութիւնս, որոյ վրայ ամենաշահաւոր մէկ ծանուցագիր մատոյց գիտուններու եւ արուեստաւորներու կոմմիսիոնն, որոյ շատերն ճեմարանի անդամներէն են և նախագահն է Պ. Գիւմա ծերակոյտն :»

« Կոմմիսիոնն շինողներու գործարանին մէջ հաստատեց նոր դրութեան կատարեալ յաջողութիւնն, ի գործ դնելով զայն Սուրբ Օգոստինի երգեհոնի երեք մատերէն մէկուն վրայ, որոյ շինութիւնն արդէն բաւական առաջ գնացեր է : Գործադրութեան նպատակն էր մէկ դի դնել բոլորովին այն յօրինուածն, որ նոր դրութեան երգեհոններու մատերու (clavier) և հողմարանի (sommier) խուփերուն (soupape) մէջ, որք փողերն կխօսեցնեն, հաղորդութիւն կհաստատեն : Գիտցուած է որ այժմեան երգեհոններու յօրինուածն խիստ մանուածոյ է եւ բազում անպատշաճութեանց եւ դժուարութեանց տեղի կուտայ : Այս առաջարկութեանս լուծումն, անկարելի էր, յանձնել աւելի նշանաւոր եւ վստահութեան արժանի արուեստագիտաց :»

Մօնիտեօր

—Մէկ ամիսէն ի վեր է, որ Մեսլէի, Արքնէի և Բենիօնի (Մէն և Լուար) հասարակութիւններն մէկ հիւանդութեան ճարակ եղեր էին, որու մէջ Մեսլէի բժիշկ Պ. Պինօ կապարու (գուրշուն) թունաւորելու նշաններ գտաւ : Հիւանդներու շատուորութիւնն կջրէր այն իղձն թէ թունաւորութիւնն, կարելի էր, ընծայել կամաւ կամ ակամայ խարդախութեան հասարակութեան կերածարմտիքին : Հարկ եղաւ հացագործներու գործածած ալիւրն քննել : Պ. Բ. . . . Արքնէ գաւառի Վասէ ջրաղացի ալիւրներու մէջ այնչափ կապար գտաւ, որք բաւական էին վերոյիշեալ դէպքն յառաջ բերել : Այսպէս, քանի մի տեսակներ մէկ քիլօ ալիւրին մէջ 5 գրամ կապար կպարունակէին. այլ տեսակներ՝ աւելի ևս : Պ. Բ. սպառուէր առաւ իր ջրաղացն կանգնեցնել մինչև գիտցուի թէ ինչ էր վնասակար խառնուրդի պատճառն : Ահա ինչ որ գտան : Ջրաղացի քարերու մէկուն կցանին մէջ (կէյտիրմէ) շրջանակին (երկաթի) մօտ մէկ կտոր կապար զետեղուած գտան, որ գուցէ հոն դրուած էր երկանաքարն հաստատելու համար, գուցէ և ցորնի պարկին մէջ եղեր էր : Ջրաղացպանն չկրցաւ այս վերջին կէտիս վրայ բացատրութիւն տալ, վասնզի երեք տարիէ ի վեր որ Վասէ՝ երկանաքարերու նորոգութիւնն չէ տեսեր : Հաւաստի երեւցածն այն է, որ թունաւորութիւնն չունի և չկրնար այլ պատճառ ունենալ, պատճառ այլանդակ, զոր թէև գիտութիւնն արդէն ցուց իբրև բաւական :

Ալօրիքի մէջ եղած ալիւրի գործածութիւնն արգիլելու համար կարգադրութիւններ եղան անմիջապէս. և ամեն անձերն, որք այն ալիւրէն ունէին, զգուշացուցին անոնց գործածութենէն ծնանելիք վտանգն :

Լրագիր Մէնի և Լուարի

Հրացաններն ետեւէն լեցնելու խնդիրն գրեթէ վերջանալու մօտ է : Պ. Գարկիա, Սալանիայի մեքենագործն, նոր մէկ եղանակ ճարտարեց, զոր կարելի է ի գործ դնել ամեն հրացաններու վերայ, և որուն ձեռնհաս մարդիկ խիստ մեծ մտադրութիւն կընծայեն : Մադրիդի մէջ, թնդանօթաձգութեան կոմմիսիոնի առջև ամենամեծ խնամօք փորձեր եղան, և Գարկեայ հրացանի արժէքն հաստատուեցաւ եթէ լեցնելու երագութեան, եթէ չթքնելու, եթէ հաստատութեան և եթէ զէնքի սակաւ տաքնալու մասին : Այս գիւտս, որոյ համար արդէն Եւրոպայի ինն պետութեանց մէջ արտօնագիր առնուեցաւ, Նապոլէոն Գ. կայսեր քննութեան տակն է այժմ . և անոր կամելովն փորձուի պիտի Ֆրանսայի մէջ : Պ. Գարկիա, երևի թէ, բանագնացութիւն կընէ նոյնպէս Անգլիոյ հետ : Գարկեայ դրութեան բազմաթիւ հրացաններ ապսպրուեցան Լիեժի երևելի գործարաններէն մէկուն . և այն քաղաքի մէջ հետևեալ ամսուն կխսուն փորձեր պիտի ըլլան, որք կորոշական կհամարուին : Մեր ընթերցողներուն կիմացնեմք այս փորձառութեանս արդիւնքն :

Ահեղ Գիսաւոր

Կծանուցանեն թէ 1865 Թուին մէկ գիսաւոր այնչափ մօտենայ պիտի մեր մոլորակին որ զանիկա վտանգի մէջ ձգէ : Մելբուրնի դատաւոր աստղաբաշխ Նիւմագերն, որ այս ծանուցումս կընէ, մեզ մէկ մխիթարութիւն կընծայէ սակայն, այսինքն թէ . եթէ երկու մարմիններն զիրար չծախեն, ինչպէս սնդկի իրարու կպչած երկու գնդակներն՝ տեսարանն ամենաչքեղ ըլլալու է, որոյ նմանն մարդկային ազգն բնաւ չէ տեսեր : Երբ 24 ժամույ գիշերներն չպիտի նշմարուին, մթնոլորտն լողալով հանապազ արեւու ցոլերէն աւելի պայծառ սաստիկ լուսի մէջ :

Ծաղկի հոտն մահաբեր է

Ծաղիկներն, որքան որ տեսքով եւ հոտով ազնուօր եւ զուարճալի են դաշտերու մէջ, այնքան ալ ննջարանի մէջ գիշեր ատեն պահելով մահաբեր են, որոյ մէկ նոր օրինակն կպատմէ Փարիզի Օփինիօն Նասիօնալ լրագիրն այսպէս գրելով թէ . « Տիկին Կ . . . որ Երեք Աղօրեաց փողոցն կբնակէր, իր գիւղաքնակ բարեկամուհիներու մէկն իրեն այցելութեան եկած, որ անոր ծաղկասիրութեան ճաշակն գիտելով, մէկ ճշմարիտ գիրկ (գուճակ) դաշտայ շուշան (մէյդանբէր չիչէյի) բերաւ անոր : Տ. Կ. . . դրաւ այն ծաղիկն ժամանակաւորապէս այն ննջարանին մէջ, ուր կննջէր իր 6 տարեկան փոքրիկ աղջիկն, որ բնութեամբ թոյլ էր և հիւանդոտ : Երեկոյին մոռցան ծաղիկներն անկէ վերցնել և ննջարանի դուռն գոցելու :»

« Հետևեալ առտուն Տիկին Կ. զարմանալով որ չլսեր, ըստ սովորութեան, իր մանկան թոթովն, գնաց տեսնել թէ կքնանայ արդեօք : Անոր քունն իրեն բնական չերևցաւ, և փորձեց . այլ ի զուր, զանիկա արթնցունել : Վախէն սրտադող ըլլալով՝ բժիշկ կոչել տուաւ, որ վերահասութիւն ընելէն յետոյ յայտնեց թէ խեղճ մանուկն խեղդուեր է ածխաթթուէն (acide carbonique-համի՛ պիփաշմի), զոր բուրեր էին ննջարանին մէջ մնացած ծաղիկներն :» Այս ցաւալի դէպքս, հաւատի եմ, որ խրատ ըլլայ մեր ազգի ծաղկասէր մայրերուն ; որք իրենց զաւակաց կեանքն ծաղկի հոտին, հարկաւ, չպիտի փոխարինեն :

— Անգուլեմի ատեանն մշտնջենաւոր բանի աշխատութեան դատապարտեց Տէր Անատ Մէն-Լաուրենտ դէ Կոնշի նախկին աւագ երէցն Անտոն անունով 15 տարեկան պատանին սոդոմական ոճրագործութեամբ բռնաբարելուն համար :

—Օրլէան քաղաքն արձանագրեց մէկ աղբիւր շիներէր հասարակութեան պիտոյից համար, և ըստ սովորութեան երկրին, պէտք էր, որ առաջնորդն զայն օրհնէր : Դիւփանլու եպիսկոպոսն (հռոմէական) նայադներու (չահապետ աղբերց — չայ իյաճէսի) մերկութենէն ամչնալով յայտնեց թէ այն աղբիւրն օրհնելու դիտաւորութիւն չունի . որ երկիրն մոմտուքի մէջ ձգեց . ինչ ընելու էր . ահա ճարն, որ գտան : Սփաժանելի տեղ ծառի ճիւղեր դրին երկու չաստուածուհիի առջև . և Այր եպիսկոպոսն ինքն զինքն խաբելով հաճեցաւ օրհնել աղբիւրն չգիտելով թէ բարոյականն բարի վարուց մէջն է և ոչ թէ սնոտի խստութեանց, կրաւ թղթակիցն :

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Մանչեստերի ազգային մատուռն հաստատուելէն ի վեր, դատարկաշրջիկ ազգայիններու թիւն, օր ըստ օրէ, հոս կշատնայ . եւ տեղւոյս սակաւաթիւ ժողովրդեանն ոչ միայն ծանրութիւն այլ եւ ձանձրութիւն կըլլայ անոնց առօրեայ պիտոյքն եւ ասդին անդին խաբելու ծախքն հոգալու համար : Ստոյգ է որ քրիստոնէական կրօնն և ազգային զգացումն ամեն Հայու վրայ անմխտելի պարտք կդնէ իր ազգակցին և կրօնակցին կարեկից ըլլալ և անոնց մարմնաւոր պիտոյքն հոգալ . այլ անոնց միայն «որք գործել ոչ կարեն և մուրալ ամաչեն». և ոչ թէ անոնց, որք 20-30 տարեկան հասակ ունենալով, ամենայն զգայարանօք կատարեալ և անվթար, կամ շատաշրջութեան, կամ դատարկակեցութեան, կամ, լաւ ևս, Անգլիոյ կամ Ամերիկայի գաղթականութեանց մէջ կորսուելու դիտաւորութեամբ հոս կգիմեն և ազգին ողորմութիւն խնդրելով զնա ևս անուղղակի իրենց չար և վատ խորհրդոյն մեղսակից կընեն :

Ուստի խորհրդակցութեամբ և տնօրէնութեամբ Ազգայնոց տեղւոյս որոշուեցաւ որ Երկրագունդի միջոցաւ երեք անգամ, երկու շաբաթն մի անգամ, հրատարակուի այս տեղեկութիւնս ի գիտութիւն ամեն Թափառական Հայերուն . որք եթէ այնուհետև դարձեալ յաճախեն մեր քաղաքն, հաւաստի ըլլալու են որ անոնց ոչ ինչ դրամաւոր նպաստ և ձեռնտուութիւն չպիտի ցուցուին ամենևին . և իրենց տառապանացն իրենք միայն պատճառ ըլլալու են և պատասխանատու :

Երեւելի Ազգայնոց :—Մեծապատիւ Մանուկ Աղայ Խարամանճեան հանդերձ Տիգրան իւր անդրանիկ որդւովն Կոստանդնուպօլսէն գալով Մանչեստեր հասան, որոց, մեր հիւանդ գոլով, այսու բարի գալուստին կշնորհաւորեմք :

Անթափ Թ Մարբա—Grey T Cloths.

19	12×10	2 0	22	5/ 4	6/ 1½	
,,	12×12	2 8	,,	6/ 3	7/ 3	
,,	15×14	3 0	,,	7/ 3	8/ 0	Բաւական կինտրուն, մանաւանդ 19 ինչ լայնութեամբ։ Գիներն չեմք փոխեր բայց մասնաւոր պարագաներու մէջ աւելի բարձր գիներ կուզուին։
,,	15×15	4 0	,,	9/ 0	10/ 3	
29	12×10	4 0	24	9/ 0	9/ 9	
,,	14×12	5 0	,,	10/ 9	12/ 0	
,,	15×15	6 0	,,	13/ 6	15/ 0	
32	14×13	6 0	,,	13/ 0	14/ 6	
,,	15×15	6 0	,,	13/ 6	15/ 0	
,,	15×15	7 0	,,	16/ 0	17/ 6	
,,	17×17	7 0	,,	18/ 3	19/ 6	
36	15×15	8 0	,,	19/ 0	20/ 0	
,,	17×17	8 0	,,	20/ 6	22/ 3	

Անթափ Ամերիքան—Grey Long Cloths.

27	17×17	7 0	36	18/ 0	19/ 9	
32	,,	8 0	,,	20/ 6	22/ 6	
36	14×11	6 0	,,	14/ 9	16/ 6	
,,	14×12	7 0	,,	16/ 9	19/ 3	
,,	14×13	8 0	,,	18/ 6	22/ 0	Գիներն անփոփոխ են և չեն խնդրուիր։
39	14×13	9 0	,,	20/ 3	24/ 3	
,,	14×13	10 0	,,	22/ 6	26/ 6	
45	14×12	9 0	,,	20/ 3	24/ 3	
,,	14×13	10 0	,,	22/ 6	26/ 4	

Անթափ Շրտինկս—Grey Shirtings.

39	12×9	5 4	8½	13/ 3	14/ 0	
,,	14×10	6 0	,,	15/ 9	16/ 9	
,,	14×12	7 0	,,	17/10½	18/ 9	
,,	14×13	7 0	,,	18/ 6	19/ 6	
,,	16×15	8 4	,,	21/ 9	22/ 9	
,,	16×16	8 8	,,	22/ 9	25/ 0	Գիներն անփոփոխ են. և խնդիրն նուազ։
,,	17×17	8 4	,,	23/ 9	24/10½	
45	14×10	7 0	,,	18/ 6	19/ 9	
,,	14×12	8 0	,,	21/ 9	22/ 9	
,,	16×15	9 0	,,	24/ 3	26/ 6	
50	16×15	10 0	,,	26/ 6	29/ 0	
54	16×15	11 0	,,	29/ 9	32/ 0	

Անթափ Մերմեր—Grey Jacconets.

39	10× 8	2 1	20	6/ 0	6/ 3	
,,	12×12	2 2	,,	6/ 4½	6/ 9	Վաճառումն հանդարտ և գիներն անփոփոխ։
,,	14×14	2 8	,,	7/ 6½	7/ 9	
44	12×12	2 6	,,	7/ 4½	8/ 0	
,,	14×14	2 12	,,	8/ 3	8/ 9	

Անթափ Միւլս—Grey Mulls.

39	10× 8	1		4/ 7½	4/10½	
,,	10× 9	1 7	,,	4/10½	5/ 1½	
,,	12×11	1 12	,,	5/10½	6/ 1½	Ներչանակութեան արժանի գործ չելլար. և գիներն անփոփոխ։
,,	14×12	1 10	,,	6/ 3	6/ 6	
,,	14×13	1 9	,,	6/ 4½	6/ 7½	
,,	16×14	1 9	,,	6/ 6	6/ 9	
44	16×15	2 1	,,	7/ 3	7/ 7½	

Ճերմակ Սաֆաչիուր—White Tanjibs.

29	1 12	12× 9	20	5/ 4	5/ 6	
,,	2 0	14×10	,,	6/ 2	6/ 4½	
33½	2 0	12×10	,,	6/ 2	6/ 4½	
34½	2 8	14×10	,,	7/ 2	7/ 4½	Խնդիրն կարի չէ։
38/9	2 8	12×10	,,	7/ 3	7/ 4½	
,,	3 0	14×10	,,	8/ 4½	8/ 7½	
43	3 8	14×10	,,	9/ 6	9/ 9	
46/7	3 12	14×10	,,	10/10½	11/ 0	

ՄԱՆԱՏՔ

Վ օտրը Տուիստ—Water Twist.

Հասարակ. երկրորդական. առաջին.

No.	4/14 միջ. թիւ	12	1/ 5	1/ 8	1/11	2/ 6	2/ 7	2/10
,,	16/24 ,,	20	2/ 3½	2/5½	2/ 7	2/ 9	2/10	3/ 0
,,	26/32 ,,	30	2/ 6	2/10	2/10	2/ 11	3/ 2	3/ 4
,,	38/42 ,,	40	3/1½	3/ 3	3/ 4	3/ 5	3/ 6	3/ 7

Զափաւորապէս կինտուուի։

Միւլ Տուիստ—Mule Twist.

No.	4/14 միջ. թիւ	12	1/ 2	1/8	1/ 9	2/4½	2/6½	2/ 9
,,	16/24 ,,	20	1/11½	2/1½	2/ 3	2/7½	2/ 9	3/ 0
,,	26/32 ,,	30	2/ 3	2/4½	2/ 5½	2/8½	2/10	3/ 1
,,	38/42 ,,	40	2/ 6	2/ 7	2/ 8	2/10	3/ 0	3/ 4

Խնդիրն կարի է։

Լ բստրա Մանած—Extra Hard.

No.	4/14 միջ. թիւ	12	1/ 9	2/ 1	2/ 4	2/ 8	2/ 9	2/11
,,	16/24 ,,	20	—		2/ 8	2/11	2/11½	3/ 2
,,	26/32 ,,	30	—			3/ 0	3/ 1	3/ 3

Հանդարտ։

Կրկնաթել Մանած Հիւսելու և Կարելու

Double Yarns, Knittings, and Sewings.

No.	4/14 միջ. թիւ	12	1/ 10	2/ 2	2/ 3	2/ 8	2/ 8	3/2
,,	16/24 ,,	20	2/ 4	2/ 5	2/ 7	2/10	2/11	3/4
,,	26/32 ,,	30	2/ 8	2/10	2/ 11	3/ 0	3/ 2	3/8
,,	40			2/11	3/ 10	3/ 3	3/ 5	3/11

Վաճառումն սակաւ ինչ դժուար է։

ԲՈՒՐԴ։ Լիվերպուլ և Լոնդոն։ 23 Յուլիսի։

Լոնդոն զաղթական բուրդի տարեկան երրորդ աճուրդն սկսաւ այս երեկոյ։ Ներսի և դուրսի գնողներն ուշադրութեամբ կյաճախեն. և գիներն զրեթէ Մայիսի և Յունիսի ծախքին հաւասարեցան։ Բրիդֆորդի բուրդի շուկան հանդարտ է։ Գնողներն բաւական ապրանք ձեռնուին ունենալով՝ նորէն գնել չեն կամիր։ Գանակութիւնն անցեալ շաբթուանէն պակաս է, գիներն՝ հաստատ։

	գին լիվրէի	
	չիլ. փեն.	չիլ. փեն.
Սպանիոյ Լէոնեզա	1/ 6	2/5
Սիդնէյի լաւն	2/ 2	2/10
Նոր Զելանդի	0/10	2/1
Հարաւային Ամերիկայի	0/ 4½	1/6½
Ալբանիայի, Վիտնի և Ակոփիայի լաւն	0/ 5	1/2½
Եգիպտոսի ճերմակ լաւն	0/ 8½	1/5
Պարսից ճերմակ Ա.	0/ 0	0/0
Ռուսիոյ լաւ մերինոս	0/ 0	0/0
Բրուսկի լուացուածն	0/ 0	0/0
Իզմիրի լուացուած Ա. տեսակն	0/ 0	0/0
Լինկիւրիի ճերմակ գիլիկ	0/ 0	0/ 0

ՄԵՏԱՔՍ։ Լոնդոն։ 23 Յուլիսի։

Բոլոր շաբաթն մետաքսի վաճառանոցն հանդարտ էր։ սակայն Յափոնի, Չինաստանի և Բանկալայի գիներն խիստ հաստատ են։ Ապրանք յանձնուեցան մեծագոյն քանակութեամբ բաց ի Իտալիոյ մետաքսէն, որ ամենեին նշանաւոր չէ։

		գին լիվրէի։	
		չիլ. փեն.	չիլ. փեն։
Իտալիոյ.	Միլանի Բերգամի	22/ 0	25/ 0
Պարսկաստանի		13/ 0	17/ 6
Թուրքաստանի.	Բուրսայի Ֆաբրիքա	27/ 0	31/ 0
Ռոդնագորի		13/ 0	21/ 0
Բանկալայի Ա. տեսակն	Սուրատի	21/ 0	23/ 0
Ցափոնի Մէքաչի լաւ տեսակն		13/ 0	26/ 6
= Մաչսամի ,,		0/ 0	0/ 0
Չինաստանի Ցատլէ		20/ 0	25/ 6
= Տայսամի		19/ 0	22/ 0
Պիէմոնտի		32/ 0	34/ 0

ԿՑԵԹՔԻ ԱՊՐԱՆՔ։

Ս--ջեկ մոտոն է լէ-ոլբէէն 3 ֆէնի։ Ցոբէնի Բ--օլբէէն՝ 1 ղէլէն։ Թ--ղէ ե- ղ-մէ խանդաբէն՝ 7 ղէլէն։ Ո--մէ ֆալանէն՝ 10 ղէլ. 2 ֆէնի։ Թ--ի ղ-ոտբէ խանդաբէն՝ 12 ղէլ. 8 ֆէնի։ Դէնէն՝ 13 ղ. 10 ֆ. ճերմակէն՝ 16 ղ. ղ-ոտէն՝ 18 ղ. 4 ֆ. Թէյ ղէ-ոլբէէն՝ 1 ղէլ՝

	գին խանթարի։	
	չիլ. փեն.	չիլ. փեն.
ՇԱՔԱՐ։ Բանկալայի Կասիփոր	43/ 0	51/ 6
= Բենարէսի ճերմակն	43/ 0	45/ 6
= Դատի	38/ 6	43/ 0
= Մադրասի ճերմակն	47/ 0	51/ 6
= Արևմտեան Հնդկաց միջակ	42/ 6	43/ 0
= Ցավայի ,, ,,	0/ 0	0/ 0
= Զինի և Սիամի ճերմակ և դեղինն	0/ 0	0/ 0
= ,, թոխա տեսակն	33/ 0	40/ 0
= Հավանայի ճերմակն	47/ 0	48/ 0
= Գուատեմալայի	35/ 0	42/ 0
= Բրազիլի ճերմակն	40/ 6	46/ 0
= 10 լիպրանոց գլուխ	42/ 0	0/ 0
= Մանիլայի ,,	0/ 0	0/ 0
ՍՈՒՐՃ (քահվէ) Մէքքէյին կամ Եմենին	93/ 0	0/ 0
= Ցավային և Բատավիային	76/ 0	86/ 0
= Պորտո Ռիկոյին	67/ 0	84/
= Սէն Դոմինգոյին	62/ 0	71/ 0

	խանթարն	լիր չիլ	փեն	լիր չիլ	փեն
ԲՐԻՆՋ Բանկալային	,,	9/ 6		13/ 6	
= Մադրասին	,,	8/ 0		10/ 6	
= Կարոլինի	,,	30/ 0		40/ 0	
= Փատնային	,,	12/ 6		21/ 0	
ՑՈՐԵՆ Օդեսսայի Քուօրդերն		40/ 0		43/ 0	
= Միացեալ Նահանգաց	,,	40 / 0		45/ 0	
ԳԱՐի	,,	30/0		35/0	
ՍՄՐԱՅՈՐԵՆ	,,	29/0		30/0	
ԿՏԱՎԱՏ Ռեդայի Կ.	,,	56/0		65/ 0	
= Եգիպտոսի	,,	52/0		53/0	
ԿՈՃ (զինէֆիլ) Յամայիքի խանթարն		140/0		190/0	
= Ամերիկէն	,,	51/0		52/0	
ՌՈՄ Յամայիքայի լաւն գալոնն		3/8		4/8	
= Հնդկաստանի	,,	1/4		1/5	
ՊՂՊԵՂ (բիբէռ) Մալաբարի սեւն լիպրէն		0/4		0/4½	
= Սինգափորի սեւն	,,	0/3½		0/3¾	
= Ճերմակ տեսակն	,,	0/6		1/1	
ԹԷՅ Կոնգու	,,	0/7½		2/9	
= Սուչոնգ	,,	1/0		2/8	
ՏԱՐԴԵՂ (բահար)	,,	2/0½		2/¾	
ԱՖԻՈՆ Թուրքաստանի	,,	18/6		0/0	
ԽԷԺ (զաք) Ադրիոյ խանթ.		90/0		95/0	
= Բարբարիոյ		74/0		84/0	
ԳԽՏՈՐ (մաղը). Թուրք. կապոյտն	,,	160/0		175/0	
= Ճերմակ և այլ տեսակ	,,	125/0		145/0	
ՃԵՀՐԻ Պարսկաստանի	,,	75/0		85/0	
= Իզմիրի		39/0		42/0	
ԿԱՂԻՆ ՎԱՅՐի (փալամուտ) Թօնսն		14/0		17/0	
ՏՈՐՕՆ (քեօք բոյնա) Իզմիրի. խանթ.		48/0		52/0	
= Ադրիոյ, Ադորիքի և Կիպրոսի		0/0		0/0	
= Բոմբայի	,,	23/0		24/0	
ԿԱՆԵՓ Ռեդայի	37	10/0	00	0/0	
= Բոմբայի	,, 33	10/0	35	10/0	
= Մանիլայի	20	0/0	29	0/0	
ՈՐԴԱՆ ԿԱՐՄԻՐ (քրմզ) ճերմակ. լիպրէն		3/1		3/6	
= սեւն	,,	3/5		4/8	
ԼԵՂԱԿ (չիվիտ) Բանկալայի լաւն	,,	8/6		8/7	
= միջակ և ստորին	,,	6/4		7 /7	
= Մադրասի ամեն տեսակն		1/0		5/9	
= Քիւրքահին	,,	2/0		7/3	
= Ոտին	,,	2/6		6/9	
ՇԻԲ գլուխ. խանթ. լիր.	6	0/0	6	5/0	
ՆՇԱԴԻՐ	6	0/0	6	/2½	
ՔՐԲԼՄ ԹԱՐԹԱՐ Ֆրանսայի	,,	110/0		0/0	
= դեղին	,,	95/0		102/6	
= թուխն	,,	85/0		92/6	
ՄԱԳՆԵԶԻԱ	,,	42/6		45/0	
Վ ԱՐԴԻԻՂ (գիւլ եաղի) ..օնցան		16/0		24/0	
ՄԵՂՐԱՄՈՄ Ամերիկայի. Թօն. լիր.	10	0/0	12	0/0	
= Հնդկաստան. ,, ,,	8	15/0	9	0/0	
ՃԱՐՊ Պետերսբուրգի Y. C խանթ.		41 /0	00	0/0	
= Հարաւային Ամերիկայի	,, 0/0	0/0	0/0	0/0	
= Սեւ ծովէն եկածն	,	41/6	0/0	42/0	
ԹՈՒՋ (ինձիր)	,,	35/0	0/0	55/0	
ՁԱՄԻՋ Վալանի	,, 0/0	27/	0/0	29/0	
= Իզմիրի կարմիրն	,, 0/0	25/	0/0	30/0	
= Սուլդան Ա.	,, 0/0	36/	0/0	40/0	
ՁԷԹ Կէլիպոլոյի 252 գալոն (թօն).	61	0/0	61	10/0	
Թրիեստի	,, 58	0/0	0/0	0/0	
Արևելքի և Մալթայի	,, 55	0/0	56	0/0	
ՄԵՏԱՂՔ. պղինձ. թերթ (չիտ)	,, 110	0/0	0/0	0/0	
= սանի տակ	,, 105	0/0	0/0	0/0	
ՁԻՆԳ	,, 0/0	0/0	0/0	0/0	
ԵՐԿԱԹ ձող	,, 7	17½	8/0	5/0	
= գամգու. . .	,, 9	10/0	0/0	0/0	
= թերթ	,, 11	10/0	12	0/0	
ԿԱՊԱՐ (քուրչուն) թերթ.	,, 21	17/6	.22	0/0	
ԱՆԱԳ (քալայ)	,, 106	0/0	0/0	0/0	
		գին մետուրի			
ԹԵՆԷՐԷ փայտի ածուխով i.c	23	6/0	26	0/0	

ՏԷՐ ԵՒ ԽՄԲԱԳԻՐ Կ. Վ. ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ
ՄԱՆՉԵՍՏԵՐ. Ի ՏՊԱՐԱՆԻ ԻԻՐՈՒՄ

Printed and published by K. Vardapete Shahnazariantz, 151, Rumford-street, Chorlton-on-Medlock, Manchester.---Tuesday, July 28, 1864.